



ՌԵԺԶ. 1867 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ. — ՅՈՒՆՈՒԱՐ

Մ Ե Ր Ն Ե Ր Կ Ա Յ Ն

Ինչպէս ամեն մարդ բնապէս անձնասէր է, բայց մէկն քան զմէկ աւելի, ասանկ ալ ամեն ժամանակ կամ դարձ բնապէս իր ներկային վրայ աւելի կը զբաղի քան իրմէ առջինին. բայց մեր դարս կամ հիմակուան ժամանակս՝ կ'երևի աւելի կերպով կամ հոգով մը զբաղած իր վրայ: Հոս ժամանակ ըսելով կ'իմանանք այս ժամանակիս մարդիկը, որ գրեթէ ամեն տեղ հոգով կամ սրտնեղութեամբ մը իրենց ներկայ կացութեան վրայ կը մտածեն: Եթէ իմաստասիրաբար նայինք՝ ներկայն միշտ անկայուն և սահուն յապագայն թափելով՝ մշտահոս գետոյ մը պէս, կամ թէ ապագայն հետզհետէ և շարունակ 'ի ներկայ փոխուելով, ներկայն մտածել և հոգալն ալ ապագայի մը համար է. միայն թէ այս ապագայն՝ շատ կարճ կամ երկայն է՝ ըստ զանազան անձանց

տեսութեան, որոյ տեսութիւնը չենք ուզեր հոս քննել և դատել. բաւական կըսեալեմք եթէ ընթերցողն համոզուած ըլլայ այս ընդհանուր հոգոյ և անձկութեան՝ որ տիրած է հիմակուան ներկայիս վրայ՝ գրեթէ ամեն ազգաց և ժողովրդոց մէջ, բաց 'ի երկրիս ծայրերը կամ խորերը եղող և հասարակաց հետ անհաղորդ մնացողներէն: Յառաջագէմ և յետամնաց, արթուն և կիսարթուն, տէր և ծառայ, նուաճող և նուաճեալ՝ ժողովրդոց կամ անձանց մէջ՝ առ հասարակ կ'երևի այս ոգիս՝ այլ և այլ աստիճանաբար կամ չափով:

Երբոր բնական երկրիս աշխարհաց կամ կլիմայից մէկուն մէջ՝ որ և է պատճառաւ շարժմունք մ'ըլլայ օդոց խառնուածքին, ոչ միայն հոն կ'ըլլայ յեղափոխութիւն եղանակաց, այլ և մերձաւոր աշխարհաց. և երբեմն երկրիս մեծ

մասին վրայ կը տարածուի այն ազդեցութիւնն. ինչպէս շատ անգամ տեսած և լսած ենք՝ որ այս կամ այն տարի ընդհանրապէս ամեն տեղ շատ ցուրտ կամ շատ տաք եղած է, կամ բարեխառն, կամ խառնակ, և այլն. և ըստ յեղանակաց փոփոխութեան կամ այլայլման՝ երկրին բերքն ալ կ'աւելնան կամ կը պակսին, զոր շատ հեղ զրեթէ բոլոր աշխարհք և ազգք ալ կը զգան: Այս բնական յեղափոխութեանց նման՝ քաղաքական կամ բարոյական աշխարհիս յեղափոխութիւնք ալ՝ շատ հեղ մէկ կլիմայէ կամ աշխարհէ մը կը սկսին, և քիչ կամ շատ կը ծաւալին յօտար աշխարհս: Այսպիսի է անշուշտ ժամանակիս անձուկ և մոմոտուկ ոգին. թէպէտ և արուեստք և գիտութիւնք կը զարգանան՝ բայց մէկ նեղութիւն կամ ճնշմունք մ'ալ կայ թէ առանձնակա՛նայ թէ ընկերութեանց և թէ տէրութեանց և ազգաց վրայ, որք ըստ իւրաքանչիւր չափու և տեսակի իրենց ներքին վիճակին և օրինաց՝ կը մոռածեն կը խօսին կը ջանան կը գործեն, կամ կը տարակուսին: Ժամանակն՝ որ աստղաբաշխական օրինօք կանոնաւորեալ և միշտ զուգաչափ զուգընթաց է, ըստ բարոյականին կամ քաղաքավարականին՝ շատ այլայլուկ և այլանդակ ընթացք և հոսանք ունի. և եթէ չեմք խաբուիր, հիմայ երթալով աւելի գահավէժ վարող քշող կերպարանք մը կ'առնու՛նք քան երբեմն. զմարդ և զմարդիկ, զազգս և զտէրութիւնս՝ բռնութեամբ մը կը քշէ յապագայն. որով հարկ կ'ըլլայ քշուելոց՝ ջանալ ուժով մը բռնելու ղներկայն, և տեսնել թէ ի՞նչ են ի՞նչ կ'ըլլան, ո՛ւր կ'երթան ո՛ւր պէտք է երթալ: Այս է ժամանակիս իր ներկային վրայ զբաղին և անձկութեամբ հոգալն:

Ի՞նչ է զլիսաւոր պատճառ այս բանիս. կամ՝ ո՞ր էն, ո՞ր կլիմայէն փրթաւ այս մեծ յեղափոխութե՛ հոգն և ազդեցութիւնն. — աւելորդ սեպիւնք վայս քննել. և մենք ալ հասարակաց օրինօք՝ քիչ մ'աւելի ներկայիս զբաղինք քան անցելոյն: Կը

տեսնեմք՝ որ հիմայ յիրաւի մեր քանի մը անցեալ տասն տարիներէն աւելի մեծ զարգացումն կայ աշխարհիս մէջ գիտութեանց և արուեստից. նորանոր ծանօթութիւնք անծանօթ տեղեաց և իրաց, աւելի ընդարձակ և բազմամասն հաղորդակցութիւն մը՝ թէ անձանց թէ իրենց մոռածութեանց և գիւտից. միանգամայն և շուտ շուտ հաղորդակցութիւն մը. մէկ մեծ տուրեառ մը մարդկութեան, շատ մեծ և բազմակերպ. (տուրք մը կայ՝ մէկմէկու հաղորդելու իրենց միտքը, կամքը և ճարտարութիւնը, բայց աւելի առք մը կայ. մէկ տուողը՝ կ'ուզէ երկուք առնուլ. ասկից մեծ հոգ և անձկութիւն մը): Յայտնի կ'երևի զարգացեալ մտաբացութիւն մը, և անկէ աւելի աչքաբացութիւն. և ալ աւելի բերանաբացութիւն մը, կամ թէ կ'ուզէք ըսենք լեզուաբացութիւն մը: Մարդուս ազատութեան իմացուածը զարգացած է, աւելի կամ պակաս, ուղիղ կամ մոլար ծանօթութեամբք. և մեծ ճիգ մը կայ անոր հասնելու, կապերը և արգելքները վերցընելով կամ թուլացընելով, ջանք մը ինքզինքը յայտնելու կամ բացատրելու. ուսկից կը հետեին գիւրագոյն հնարք խօսակցութեան և գրութեան, որ երթալով կը շատնան, կը ծաւալին, և հաղորդակցութիւնք կը յաճախեն: Եւ որովհետեւ այս բանիս յաճախութեամբ՝ մարդ շատ բան կ'իմանայ կը տեսնէ, բայց քիչ բանի կըրնայ ձեռք հասցընել, կամքն մեծ կուգայ, կարողութիւնք պզտիկ. շատ հեղ աւելի կը նեղուի քան կը հանգչի, կը փնասուի՝ քան կ'օգտուի. ասկէ ժամանակիս ներկային հոգն և անձկութիւնն:

Թողունք առ այժմ՝ ընդհանուր և համաշխարհական տեսութիւնք, զանք մասնաւորի, մէկ աշխարհի և մէկ ազգի մը, մեր հայոց ազգիս. որովհետեւ ներկայիս հոգն և օրէնքն՝ յայսմ մասին զմեզ ալ կը ստիպէ գոնէ երբեմն մեր վրայ խօսք մ'ընել, որ ոչ միայն դիտող և տեսող իմացուինք՝ այլ և ոչ անտարբերք՝ մեր ազգային վիճակին, շարժմանց և ընթացից:

Ով որ մեր մէջ քիչ մը միտք և սիրտ կը բանեցընէ՝ կարծեմ՝ չի կրնար ուրանալ իր և իր համազգեաց մէջ ալ եղած ներկային հոգը, անձկութիւնը խլրտմունքը. հարկ ալ էր որ մեր ազգն ալ զգար այս հոգը. որովհետեւ բնակութեամբ՝ սփռած է ազգաց մէջ, և աւելի այնպիսի ազգաց մէջ որոց քաղաքական վիճակն՝ աւելի յեղափոխիչ են ազգաց և աշխարհաց վիճակին. դարձեալ՝ իր բնական ճարտարութեամբը, հետաքրքրութեամբն, լեզուագիտութեամբն և քիչ շատ ուսմանց զարգանալովը՝ շատ ենթակայ է հաղորդակցութեան. և դարձեալ՝ մեծագոյն մասն ազգին այնպիսի կառավարութե մը տակ է՝ որ թոյլ կու տայ իրեն բաւականապէս ինք գինքը ձևացընելու զարգացընելու՝ ընկերութեամբք, գրարոցներով, օրագրովք, տպագրութեք, թատրոններով, սահմանադրութեամբք, օտար աշխարհներ երթալով բան սովորելու, և այլն։ Ով որ այս դարուս ինչուան հիմայ անցածին վերջի կէսը քընէ՝ յայտնի կը տեսնէ մէկ ազգային յեղափոխութիւն մը և զարգացում մը։...

Բայց եթէ այսօրուան օրս հարցընեմք մեր քննողաց և իմացողաց՝ թէ յիշաւի կը յառաջագիմէ՞ք, կը զարգանա՞ք, լաւ վիճակի մէջ ենք, գոհ ենք մեր ներկայէն։ — Կարծեմ՝ թէ չատերն քան քիչերն կ'իմանան մեր վերն ըսած հոգը, անձկութիւնը և տագոհութիւն մը։ Չեն կրնար ուրանալ թէ կայ զարգացում մը յուսմունս, 'ի դպրոցս, 'ի գիրս և յօրագիրս. զարգացում մը ճանչնալու զօտարս, քննելու, լսելու, և զարգացում մը խօսելու քան լսելու. սակայն այդ ամենայն դեռ մասնական կամ առանձին կամ պակասաւոր կ'երեի. և կը զգան բոլորական կամ կանոնաւոր զարգացման մը պէտք, որով դարձեալ տագոհութիւն և անձկութիւն ներկայիս վրայ։

Ինչ է արդեօք ասոր պատճառն և դարմանն։... Թերեւ շատ փափագի բարի ընթերցողն ասոր պատասխանը լրսել։ — Ես գոհ կ'ըլլամ հարցմանս հա-

մոզուողին վրայ, և պատասխանը կը թողում անոնց՝ որոնք իրենց իրաւունք կամ նպատակ ըրած են այսպիսի խընդիրները յուշել և խօսիլ իրենց շրջաբերական դրոց մէջ, ուր շատ անգամ ազգային վիճակի և դիպուածոց վրայ կը խօսուի. բայց աւելի կը փափագէի՝ եթէ ազգիս մերձաւոր և երկար դիտող և քննող մը՝ ծանրութեամբ և առանց կրից և կողմնատարութեան և պատճառք խօսեր. մանաւանդ թէ լսուէր այնպիսի ձայն և խօսք, ևս առաւել թէ առանց հակաճառութեան ընդունելի ըլլար։ Բայց եթէ մեզի ալ օրինաւոր չէ հարցում մ'ընել և անպատասխան թողուլ, ընենք հարեանցի խորհրդածութիւն մը, զայն այլ թողլով 'ի կշիռս արդարութեան։ Եւ պէտք է նախ այս անդրադարձ մտածութիւնն ալ ընել, որ մեր ազգն ըսելով՝ ամեն անգամ չի մացուիր ընդհանուր հայ եղողն և հայերէն խօսողն. որովհետեւ ինչպէս ամենքս գիտենք՝ քանի մը մեծ բաժանմունք և խումբք կան մէջերնիս, որ յիրս իրս իրարմէ կը տարբերին, և աւելի կամ պակաս հանգամանք ունին. այսպէս է մէկ մը՝ բաժանումն էջմիածնական և կաթողիկէ հայոց. մէկ մ'ալ բաժանումն ըստ տիրապետութեանց՝ որոց հպատակ են հայք. և ասով ալ գլխաւորապէս իմանալու է զՕսմանեան և Ռուսաստան մէջ կան իբրեւ 550000 հայք, որք կրօնիւք շատ մերձաւոր և նման են իրենց տիրողին, որոյ քաղաքավարութիւնն ալ աւելի մերձաւոր և նման է ուրիշ եւրոպական ազգաց. հարկ է որ մեր ռուսական ազգայնոց վիճակն ալ տարբեր ըլլայ շատ բանի մէջ յՕսմանեան հայոց։ Աս եսքիններս ազգին մեծագոյն բաժինն ըլլալով, գուցէ քառապատիկ քան զռուսականն, շատ հեղազութեան անունն ալ աւելի իրենց վրայ կ'իմացուի, և ժամանակիս եղած խօսից և վիճից մեծ մասն իրենց վրայ է. մանաւանդ որ սահմանադրութեամբ և Օսմանեան դրան տեսութե՝ Կ.Պոլսի պատրիարքն ընդհանուր հեղինակութիւն ունի ամենայն Օսմանեան հայոց

վրայ թէ ըստ եկեղեցական և թէ ըստ քաղաքական գլխոյ . հեղինակութի մը՝ որ շատ աւելի մեծ և ընդարձակ է քան ղէջմիածնի կաթողիկոսին , թէ և սա ըստ հոգեւորին գլխաւորագոյն սեպուի :

Այս բաժնիս մէջ էր մեր ազգին գըլխաւոր խորհումն և տեսարանն . որով առջի ըրած տեսութիւննիս ալ կերպով մ'աւելի ասոր կը վերաբերի , (առանց բոլորովին 'ի բաց առնելու մէկալ երկու բաժիններն ալ) : Քանի մը տարի է՝ որ նոր կանոնօք ազգային ներքին վարչութեան , կամ թէ կ'ուզէք՝ Սանսաւադորէն , ազգը վարող իշխանութիւնը ըստ մասին ամփոփուած , ըստ մասին աւելի ընդարձակուած կ'երեւի . և այս երկու հանգամանաց դեռ հաւասարակշիւութիւնը չգտնելէն՝ կը հետեւի այլայլումն և խառնակութիւն մը , որով 'ի հարկէ ներկայս գոհացուցիչ չի կրնար ըլլալ : Ազգերնուս քաղաքական և ցրուած վիճակը՝ մեզի թուի թէ կը պահանջէ կամ կը փափագի մէկ միահամուռ շարժիչ և վարիչ զօրութիւն մը . այս զօրութիւնը դեռ չկայ կամ չէ կարգաւորուած անշուշտ . սահմանադրութեան նպատակն այլ այս է . բայց գուցէ ազգին կանխեալ յետամնացութիւնն և հանգամանքն՝ այնքան ճղճղած և զանազանած զատ և խառն ժողովոց , մասնաժողովոց և յանձնաժողովոց տեղ աւելի կեդրոնական և սակաւամասն ժողովք և գլուխներ ուզեր : Գեղեցիկ է և սքանչելի ընկերութեանց և ժողովոց կազմութիւնն . բայց աւելի չքնաղ և սքանչելի կ'ըլլար՝ այնքան ժողովոց և ժողովականաց յարմար , կիրթ , զգօն գլուխներ ունենալ . յուսանք և պարծինք ալ թէ կը գտուին այդպիսի գլուխք ալ , սակայն շատ անոտիապարծ կ'ըլլանք եթէ ըսէինք թէ շատուր են այդպիսի գլուխք : Մեր ազգին այսպիսի նոր և ինքնաջան յեղափոխութեան առնէն՝ զարմանք ալ չէ շատ նախապատրաստ բանիբուն գլուխներ չունենալն . բայց ոչ նուազ փնասակար է կարծելն՝ թէ ունի , կամ թէ քիչ ատենուան մէջ կը ձևանան այնպիսի գլուխք : Եւս ա.

ռաւել ծիծաղական կ'ըլլայ՝ եթէ գլուխը չփոթենք ձեռաց և լեզուի հետ , գործունեայն և շատխօսը խոհական դրենք և յարմար վարչութեան : Պէտք է հոս յիշենք՝ որ ազգերնիս հնուց 'ի վեր աւելի յորդոր և յաջող եղած է խօսելու , քան (ցած ձայնով մը ըսեմ) լաւ խօսելու , որ է ըսել լաւ խորհելու և ըստ այնմ խօսելու : . . . Արդ երբ ժողովք , ընկերութիւնք , գիւրք և օրագիրք՝ առանց կանխիկ պատրաստութեան , կամ հանդարտ ծանրութեան , (որ այս այլ , ամօթխածութեամբ ըսենք՝ մեր ազգին մէջ քիչ մը նուազ է) կը բազմացնեն խօսքի նիւթերը , 'ի հարկէ շատ զարգացումն և ուղղութիւն չըլլար : Խօսիչ և գրել՝ ունին միշտ օգուտ , և ասոնցմով ալ կ'երևի մեր մէջ զարգացում մը , սակայն աղէկը չխօսելով և չգրելով՝ ո՞րչափ ալ փնասք կ'ըլլան : Խօսիչ և գրելն՝ նշան են զարգացման , կ'ընդունիմ . բայց ոչ միշտ ուղիղ և կանոնաւոր զարգացման . մեր ամեն գրուածքն և խօսուածքն ալ 30 կամ 40 տառերով կը բաղկանան , բայց նոյն տառերն են խելացին ալ ոչ խելացին ալ շարագրոյն և արտաբերոյն :

Մարդս միայն գլխովն չէ մարդ , թէ և ունենայ գլխի կրթութիւն , եթէ կրնանք այս անունը տալ որ և է ուսմանց և արուեստից գիտութեան , որ յիշաւի հիմայ մեր մէջ զարգացած կամ զարգանալու վրայ են . այլ մարդս մարդ է և Սրտով . և գուցէ ազգի մը կրթութե , յառաջագիմութեան , յեղափոխութե , լաւութեան և գոհութեան համար՝ պէտք են քանի մը գլուխք , քանի մ'աւելի լեզու , և շատ մը ձեռք . բայց պէտք են այնքան սիրտք՝ որքան անձինք : Մեր ազգային կրթութեան և զարգացման տեղերուն մէջ (ինչպէս վանք և վարժարանք) և միջոցներուն (ինչպէս գիւրք և օրագիրք) , ևս առաւել վարողներուն (ինչպէս վարժապետք և վարդապետք և քահանայք) այս սրտի կամ բարոյական կրթութիւնը լաւ քննելի և զարմանելի բան է . և ասիկայ է սու այժմ , ըստ մեզ , ազգին գլխաւոր պէտքն , զոհու.

Թեան կամ տօգոհութեան պատճառն , ներկայիս կերպարանքը տուող կամփոխողն : Գտուին թերեւս գլուխք , նաեւ բարձր գլուխք , նաեւ քողաւոր եւ հովա , նաւոր գլուխք , գտուին ժիրաժիր ձեռք եւ թուլթակ լեզուք , որք քիչ կամ շատ շարժեն զազգը , բայց եթէ պակսի ըզգայուն եւ բարեբուն սիրտն՝ իրենց բրած աղբեցութիւնն եւ օգուտն անյաջող կամ սակաւատե կ'ըլլայ . ազգն աւելի կը մղուի քան թէ առաջ կ'երթայ : Քիչ անգամ գլուխ գլխով կը բռնկի , բայց զրեթէ միշտ սիրտք սրտով կը վառին : Ազգերնուս փափագելի եւ ցանկալի ապագայն՝ շատ դժար կ'երևի գտնել զխոց եւ լեզուաց բազմութենէն , բայց շատ դիւրին եւ յուսալի՝ սրտից կակղութենէն եւ միութենէն . գլուխք՝ կրնան ունենալ ծանրագին դանձեր , բայց քիչ անգամ ուրիշները կը հարստացընեն . իսկ սիրտք՝ իրենց տաքութեամբը ունեցածնին հալեցընելով՝ կը թափեն կը ձուլեն զիրար , եւնոր կերպարանք կ'առնուն կու տան . բաւական է թէ քանի որ դեռ թարմ ու դալար կամ դեռ ընդունակ են՝ տրուի իրենց լաւ եւ ընտիր սերմն եւնիւթ : — Ո՛վ դուք , որ ազգիս յառաջադիմութեան , զարգացման եւ ներկայիս պաշտօնեայք էք , քիչ մ'աւելի քան զգլուխ , քան զլեզու , քան զձեռքս՝ սիրտ եւ սրտեր շարժեցէք , աւելի եւ շատ աւելի օգուտ կ'ընէք անոր , ձեզի՝ պատիւ , եւ օրհնելի անուն մը կը թողուք :

Մարկոս Արեւիկոսին դեռ կայսր չեղած առ Լաբինա Հռոմայեցի տիկինը գրած մխիթարական բռնորը , երկանը մահոռան հաւնար :

Մարկոս 'ի Մօնթէչէլեայ , բղելիս Հռոմայեցի , առ Լաբինա տիկին իմոյս կըողիոսի ողջոյն , եւ մխիթարութիւն 'ի դից : Կրնայ ըլլալ որ դժարդ եկած ըլլայ իմ անհոգութեանս վրայ , որ ու-

շացայ առանկ ծանր վշտացդ մէջ զքեզ մխիթարելու . բայց չեմ տարակուսիր որ քու սրտիդ ազնուութիւնը , ու իմ յօժարութիւնս միշտ քեզի ծառայելու , մտքէդ դուրս կ'ընեն ատ կասկածը . թէ որ վերջինը եղայ զքեզ մխիթարելու , բայց առջինը եղայ ու եմ քեզի ցաւակից ըլլալու . քեզի օգնելու ալ յետին չեմ ըլլար :

Շատ օր է որ իմացայ , բայց չուզեցի որ ինծմէն իմանաս ատ ցաւալի լուրը . սիրտս առաջ չիգնաց անանկ սիրելի անձին մահը գրելու քեզի , որ արդէն վշտացած էիր իր այդչափ ատենէ 'ի վեր քեզմէ հեռու ըլլալուն համար : Իրաւունք չէր որ ես աս անախորժ ծառայութիւնը ընէի անոր՝ որ այնչափ արդիւնք ունի վրաս : Իսկ հիմայ զիտնալով որ իմացեր ես իրեն մահը , կրկին եղաւ իմ ցաւս . ինչուան հիմայ իր մահը միայն կը զգայի , հիմայ իր մահուանը հետ քու տրտմութիւնդ ալ կը զգամ : Իրաւունք ունիս լալու , չէ թէ իր վրայ՝ որ հիմայ դից հետ է , այլ մեր թշուառութեանը վրայ՝ որ այսչափ չարեաց մէջը կը տանջուինք : Ո՛վ Լաբինա , շատ անգամ կը մտածեմ որ՝ որը աւելի ողբանք , չարերը որ կ'ապրին , թէ բարիներն որ կը մեռնին . վասն զի երկուքն ալ ողբալի են : Մեծ վիշտ է աղէկներուն մահը տեսնել , բայց գէշերուն ապրիլը տեսնելն ալ անկէց պաւկաս վշտալի չէ : Ան որ հարկաւ օր մը պիտոր հասնի , հասնելուն համար պէտք չէ որ շատ վշտանանք . ալ լաւ է դից քովը երթալ , քան թէ մարդկանց հետ ապրիլ՝ որ ասանկ չար են : Աղէկ մարդը միշտ կ'ապրի մեռնելով , իսկ չարը միշտ կը մեռնի ապրելով . ուրեմն դիք կըողիոսին իրենց հետ ըլլալը ուզեցին . ստոյգ գիտեմ որ ինքն ալ յիշելով ինչ բաներէ ազատեցաւ . հիմակուան վիճակին վրայ գոհ է , ու կ'ուզէ հոն կենալ քան թէ աշխարհք դառնալ : Ինչուան հիմայ դու իր դառնալուն կը սպասէիր , հիմայ ինքը քեզի կը սպասէ : Մի կարծեր որ դուն միայն զինքը կը սրբնցուցիր . ամենքս ալ զինքը կը